

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Նունուֆար Ալեքյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության ատոմային էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Պրահա (Չեխիայի Հանրապետություն), 2023թ. դեկտեմբերի 4-ից 8-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն 2023թ. դեկտեմբերի 4-ից 8-ը Պրահայում (Չեխիայի Հանրապետություն) Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կողմից կազմակերպված «Educational Workshop on Regulatory Challenges in Small Modular Reactors» թեմայով աշխատանքային հանդիպմանը

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Ատոմային էներգետիկայի բնագավառի անվտանգության իրավական և կարգավորման շրջանակները, անվտանգության ենթակառուցվածքի ամրապնդումը, փոքր մոդուլյար ռեակտորների լիցենզավորման գործընթացի մարտահրավերները և դրանց նկատմամբ խորքային պաշտպանության կիրառումը, փոքր մոդուլյար ռեակտորների համար դիզայնի և անվտանգության վերլուծությունը, փոքր մոդուլյար ռեակտորների նախագծման մեջ պասիվ և ներհատուկ անվտանգության առանձնահատկությունների օգտագործումը, փոքր մոդուլյար ռեակտորների արտակարգ իրավիճակների պլանավորման գոտի, փոքր մոդուլյար ռեակտորների նախագծման, կառուցման շահագործման և դրանց տեխնիկական սպասարկման հետ կապված հարցեր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Միջոցառման շրջանակներում ներկայացվել են դասախոսություններ ինչպես Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) փորձագետների, Չեխիայի Հանրապետություն միջուկային անվտանգության կարգավորման մարմնի, վերջինիս գիտատեխնիկական աջակցման կենտրոնի, այնպես էլ տարբեր երկրների միջուկային էներգետիկայի բնագավառի մասնագետների կողմից:

Հանդիպման ընթացքում իրենց ելույթներն են ներկայացրել նաև Հայաստանի, Բուլղարիայի, Էստոնիայի, Բելգիայի, Հունգարիայի, Գանայի, Հոլանդիայի, Լիտվայի, Լատվիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Շվեյցարիայի և Ուկրաինայի ներկայացուցիչները: Կազմակերպվել է այցելություն Չեխիայի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման մարմնի գիտատեխնիկական աջակցման կենտրոն:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման ավարտին կազմակերպիչների և մասնակիցների կողմից շեշտվել է հետագայում ևս նմանատիպ միջոցառումների անցակացման կարևորությունը՝ հաշվի առնելով ատոմային էներգետիկայի բնագավառում փոքր մոդուլյար ռեակտորների հետագա կիրառությունը:

Հանդիպման ավարտին տրվել է վկայական:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվում է, որ նմանատիպ հանդիպումների անցկացումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել փոքր մոդուլյար ռեակտորներին առնչվող նախանշված ծրագրերը՝ կիրառելով բնագավառում առաջատար երկրների փորձը և ժամանակակից տեխնոլոգիաները:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության
Ատոմային էներգետիկայի բաժնի
գլխավոր մասնագետ



Նունուֆար Ալեքյան

12.12.2023թ.